

## Երևանում կոշտ թափոնների կառավարման նախագիծ

Երկիրը՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Նախագծի համարը՝	46172
Բիզնես ոլորտը՝	Ենթակառուցվածք, Եվրասիա
Պետական/մասնավոր՝	Պետական
Բնապահպանական դասը՝	A
Հաստատման ամսաթիվը՝	28 հոկտեմբերի 2015թ.
Կարգավիճակը՝	Մարվող
Նախագծի ամփոփ նկարագրի (ՆԱՆ) հրապարակման ամսաթիվը՝	31 հուլիսի 2015թ.

### Նախագծի նկարագիրը

ՎԶԵԲ-ը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է մինչև 8 միլիոն եվրոյի չափով սուվերեն վարկ՝ Երևան քաղաքին (քաղաք) ամբողջությամբ պատկանող հատուկ նշանակության ընկերության՝ Երևանի աղբավայրերի կառավարման ընկերության (ընկերություն) հետագա վարկավորման համար:

Նախագիծը համաֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) կողմից հատկացվող 8 միլիոն եվրո սուվերեն վարկով, ԵՄ Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) 8 մլն եվրո ներդրումային դրամաշնորհով և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության (E5P) 2 միլիոն դրամաշնորհով:

### Նախագծի նպատակները

Վարկերի և դրամաշնորհի միջոցները կօգտագործվեն 1.1 միլիոն բնակիչ ունեցող Երևան քաղաքում ԵՄ չափանիշներին համապատասխանող աղբավայրի կառուցումը ֆինանսավորելու համար:

Ներդրումը կլրացվի Տեխնիկական աջակցության (SU) փաթեթով, որն ընդգրկում է աջակցությունն իրականացմանը, ինչպես նաև աջակցությունն ընկերության կորպորատիվ զարգացմանը: Ընկերությանը կցուցաբերվի նաև աջակցություն Բնապահպանական և

սոցիալական գործողությունների ծրագրի, ինչպես նաև Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային նախագծի իրականացման գործում:

### **Ազդեցությունն անցումային շրջանի վրա**

Ակնկալվող անցումային ազդեցության ցուցանիշ (ETI) 80

Նախագծի ազդեցությունն անցումային շրջանի վրա պայմանավորված է հետևյալ գործոններով.

Ծախսերը հատուցող՝ թափոնների վերօգտագործման սակագնի և կայուն ֆինանսավորման ներդրում վերջնական օգտագործող հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանվող՝ ծախսերն արտացոլող թափոնների հեռացման սակագների միջոցով,

Քաղաքի և ընկերության միջև պայմանագրային հարաբերությունների հաստատում՝ համապատասխան շահագրգիռ կողմերի համար կանխատեսելիությունը և հաշվետվողականությունն ապահովելու նպատակով,

Ներկայիս տեղական նորմերից դուրս գտնվող նոր բնապահպանական չափանիշների ցուցադրում՝ փոխարինելով աղբանոցների այժմյան օգտագործումը և խթանելով հիգիենիկ և ԵՄ պահանջներին համապատասխանող աշխատանքներին աղբավայրում,

Նոր գործընթացների ներդրում գազահավաք սարքավորումների տեղադրման միջոցով:

### **Տեղեկատվություն հաճախորդի վերաբերյալ**

Սուվերեն վարկ Հայաստանի Հանրապետությանը  
Հայաստանի Հանրապետություն, ընկերություն և քաղաք Երևան

### **ՎՋԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում**

8,000,000.00 եվրո

8 միլիոն եվրոյի չափով սուվերեն վարկ Հայաստանի Հանրապետությանը, որը կհամաֆինանսավորվի ԵՆԲ-ի կողմից հատկացվող 8 միլիոն եվրո սուվերեն վարկով, ՀՆԳ-ի 8 միլիոն եվրո կապիտալ դրամաշնորհով և E5P-ի 2 միլիոն ներդրումային դրամաշնորհով:

### **Նախագծի ընդհանուր արժեքը**

25,440,000.00 եվրո

Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 24.00 միլիոն եվրո՝ ներառյալ ԵՆԲ-ի, ՀՆԳ-ի և E5P-ի կողմից տրամադրվող համաֆինանսավորումը:

Նախագիծը կշահի նաև տեխնիկական աջակցությունից, որի նպատակն է օժանդակել ընկերության կորպորատիվ զարգացմանը և օգնելու նախագծի իրականացմանը:

### **Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր**

Նախագիծը ստացել է բնապահպանական A դաս՝ Բանկի 2008թ. Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՄՔ) համաձայն (նախագիծն ի սկզբանե դիտարկվել է 2011թ-ին՝ նախքան 2014թ ԲՄՔ-ի ընդունումը [նշում. Նախագծի արդյունքը կլինե՞ր նույնը 2008թ. կամ 2014թ. ԲՄՔ համաձայն]): Բանկի կատարողական պահանջների (ԿՊ) համաձայն՝ պատրաստվել էր հրապարակային բացահայտման համար նախատեսված Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) փաթեթ և հրապարակվել էր տեղական մակարդակով և Բանկի կայքում 2015թ. հունիսի 24-ին: Տեղական ԲՄԱԳ-ի հաստատումը նախքան շինարարության մեկնարկը կհամաձայնեցվի պայմանագրի միջոցով:

Նախագիծը կհանգեցնի նշանակալի բարելավումների Քաղաքում կոշտ թափոնների կառավարման ծառայությունների որակի հետ կապված, մասնավորապես, կբարելավվի հանրային առողջությունը, քանի որ կնվազեցվեն վարակը փոխանցողները (առնետները, շները և միջատները), որոնք կարող են հիվանդություն տարածել, կվերացվեն ներկայիս ստորգետնյա հրդեհները և կպակասեն աղմուկը և հոտը: Նախագծի արդյունքում հետագայում կփակվի Քաղաքի կողմից ներկայումս շահագործվող աղբավայրը, ինչը նշանակալի առավելություններ կունենա ոչ միայն հանրային առողջության և աշխատանքի հիգիենայի և անվտանգության, այլ նաև՝ շրջակա միջավայրի համար: Ներկայիս աղբավայրը կփակվի, նախատեսվում է այն ծածկել, ինչը կֆինանսավորվի առաջարկվող նախագծի շրջանակում, և կձեռնարկվեն լրացուցիչ միջոցառումներ, որոնք կֆինանսավորվեն ԵՆԲ-ի կողմից առանձին համաձայնագրի շրջանակում:

Կոշտ թափոնների կառավարման ազգային ռազմավարության մշակման ընթացքում որպես տարբերակ դիտարկվել էին թափոնների տեսակավորման օբյեկտները: Գնային մատչելիության սահմանափակումների պատճառով այս օբյեկտները չէին ներառվել Ռազմավարությունում: Տարածաշրջանային սանիտարական աղբավայրերն ընտրվել էին որպես թափոնների կառավարման՝ ծախսերի առումով ամենաշահավետ տարբերակ՝ հաշվի առնելով Հայաստանի ներկայիս պայմանները: Հիմք ընդունելով այս լուծումը՝ ՎՁԵԲ-ին ներկայացվել է դիմում Քաղաքում ԵՄ պահանջներին համապատասխանող աղբավայրի կառուցման և շահագործման համար ֆինանսավորում տրամադրելու համար, և նախագիծը կառուցվել է այնպես, որպեսզի բավարարի աղբավայրերին վերաբերող ԵՄ համապատասխան պահանջները (աղբավայրերի մասին 1999/31/ԵՀ հանձնարարական): Այնուամենայնիվ, թափոնների տեսակավորման և վերամշակման հետ կապված ԵՄ պահանջները չեն կարող կիրառվել նախագծի մակարդակով, և դա կախված չէ դիտարկվող նախագծից: Աղբավայրը կունենա միջնաշերտերի համակարգ՝ հողը, մակերևութային և ստորերկրյա ջրերը նեխաջրերից և հետագա աղտոտումից պաշտպանելու համար: Նեխաջրերը կհավաքվեն և կվերաշրջանավորվեն աղբավայր: Աղբավայրի գազը կհավաքվի և կայրվի: Մակերևութային ջրերի աղտոտումը կանխելու համար աղբավայրից նեխաջրերի ներկայիս հոսքը կհավաքվի նեխաջրերի ռեզերվուարում: Նեխաջրերի հոսքի հունի աղտոտված հողը կհեռացվի, ժամանակավորապես կպահվի և հետագայում կտեղադրվի նոր աղբավայրում, երբ աշխատանքները սկսվեն:

Մոտ 160-200 մարդ իրենց ապրուստը վաստակում են տեսակավորելով ներկայիս աղբավայրի վերամշակման ենթակա նյութերը և դրանք վերավաճառելով գնորդներին: Այս ընտանիքներն ապրում են աղբավայրին մոտ գտնվող բնակավայրերում կամ տներում՝ վատ պայմաններում: Ակտիվ աղբ հավաքողների համար ներկայիս աղբավայրի փակումը նշանակում է ապրուստի միջոցների կորուստ և տնտեսական տեղահանում: Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային նախագիծը (ԿՊՎՇՆ) մշակվել է ՎԶԵԲ-ի ԿՊ5 պահանջներին համապատասխան, որոնք վերաբերում են տնտեսական տեղահանում հետ կապված խնդիրներին:

Միջոցառումները, որոնք ուղղված են բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցության վերացմանը և Ընկերության գործունեությունը ՎԶԵԲ-ի ԿՊ-ներին համապատասխանեցմանը, ներառվել են Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում (ԲՄԳԾ): ԲՄԳԾ-ում արծարծված հիմնական հարցերն, ի թիվս այլնի, վերաբերում են աղբավայրում աշխատանքային պայմաններին, աշխատանքի հիգիենային և անվտանգությանը, կենսաապահովման միջոցների վերականգնմանը, աղբավայրի տեղանքի վերականգնմանը փակումից հետո, մշտադիտարկմանը, շահագրգիռ կողմերի ներգրավմանը և բողոքարկման մեխանիզմին:

Ընկերությունը Բանկին կտրամադրի բնապահպանական և սոցիալական ազդեցության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ ներառյալ՝ ԲՄԳԾ-ի իրականացման մասին թարմացված տեղեկատվությունը: Բանկը, անհրաժեշտության դեպքում, կարող է նաև իրականացնել մշտադիտարկման այցեր:

Նորություններ (մայիս 2022թ.)

Աղբավայրի կառուցման մրցույթը նախատեսվում է ավարտին հասցնել 2022թ-ին: Մշակվել է Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր (ԿՊՎՇՆ), որը ներառում է Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը: ԿՊՎՇՆ-ն կթարմացվի և կիրականացվի շինարարության մեկնարկից 6 ամիս առաջ: Նշանակվել է ԾԻԳ-ի խորհրդատու ԲՄԳԾ-ի իրականացման գործում Ընկերությանն աջակցելու համար: ԲՄԳԾ-ի իրականացումը շարունակվում է նախաշինարարական աշխատանքների համար:

## Տեխնիկական աջակցություն

Նախքան ստորագրումը

SU1. Տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն՝ առաջարկվող Նախագծի տեխնիկական, ֆինանսական և գործառնական վերլուծության հետ կապված Բանկին աջակցելու համար: 140,000 եվրո՝ ֆինանսավորում Ավստրիայի կառավարության կողմից:

SU2. Բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություն՝ Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում իրականացնելու համար ներառյալ՝ առկա օբյեկտների և գործունեության բնապահպանական և սոցիալական վերլուծությունը՝ ՎԶԵԲ-ի 2008թ.

Բնապահպանական և սոցիալական քաղաքականության համաձայն: 160,000 եվրո՝ ֆինանսավորում Ավստրիայի կառավարության կողմից:

SU3. Ֆինանսական կանխատեսումների թարմացում՝ Բանկին Նախագծի ֆինանսական վերլուծության հետ կապված աջակցելու համար: 7,000 եվրո՝ ֆինանսավորում Բանկի սեփական միջոցներից:

Ստորագրումից հետո

SU4. Ծրագրի իրականացման գրասենյակի աջակցություն, ինժեներական նախագծման ծառայություններ, գնումների և պայմանագրի վերահսկում, որը ներառում է աջակցություն նախնական որակավորման փուլի հայտատուների ընտրության, մրցութային փաստաթղթերի պատրաստման, հայտերի գնահատման, պայմանագրի շնորհման և պայմանագրի վերահսկման հետ կապված: 450,000 եվրո՝ ֆինանսավորում Չեխիայի Հանրապետության կառավարության կողմից:

SU5. Կորպորատիվ զարգացման ծրագիր և Շահառուների մասնակցության ծրագրեր (ԿԶՕ), որոնք ներառում են աջակցություն Հանրային ծառայությունների պայմանագրի, Ֆինանսական և գործառնական արդյունավետության բարելավման ծրագրի (ՖԳԱԲՕ) և Կորպորատիվ բիզնես պլանի մշակման և ներդրման հետ կապված: 500,000 եվրո, որի հատկացումը նախատեսվում է միջազգային դոնորից կամ ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամից (ԲՀՏ):

SU6. Աջակցություն Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագրին և տեղական ԲՍԱԳ-ին, որի նպատակն է օժանդակել Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագրի և տեղական ԲՍԱԳ-ի պատրաստմանը և հաստատման գործընթացին: 180,000 եվրո, որի հատկացումը նախատեսվում է միջազգային դոնորից կամ ԲՀՏ-ից:

## Լրացուցիչ տեղեկատվություն

### Ընկերության կոնտակտային տվյալները

Նորա Մարտիրոսյան  
[nora.martirosyan@yerevan.am](mailto:nora.martirosyan@yerevan.am)  
+ 374 10 52 09 73  
[www.yerevan.am](http://www.yerevan.am)

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Բուզանդի փ. 1/3

### Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

### Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎԶԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

### **Ընդհանուր հարցումներ**

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

### **Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)**

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դիտարկելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

### **Բարեվարքություն և համապատասխանություն**

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ

հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետևողականության փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ [compliance@ebrd.com](mailto:compliance@ebrd.com): Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

### **Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)**

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

### **Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ՄՀԱՄ)**

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ՄՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ՄՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած

անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Օրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ՕՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ՕՀԱՄ-ի հետ էլ-փոստով [ipam@ebrd.com](mailto:ipam@ebrd.com)՝ ՕՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: